

դառնան ի տուն: Եւ մնայ ջուրն այն երկիրն վեց ամիս. ապա սկսանի նուազիլ եւ ցամաքիլ. մինչ զի ցամաքն երեւի: Եւ երկիր պարտացեալ տայ զպտուղն սերման հարիւրաւոր, վաթսնաւոր եւ երեսնաւոր ըստ առակի Տեառն, եւ այնպէս բազում արգիւնս տայ. զի եւ լնու դամենայն աշխարհս, որպէս ասի յառակաց. Եթէ ամենայն աշխարհս սղութիւն լինի, Մսըր յազեցուցանէ. իսկ թէ ի Մսըր սով լինի, ամենայն աշխարհ չկարէ յազեցուցանել:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՔ ՖԵԼԱՀԱՅ

Այսպէս բարելի եւ լի եւ առատ է (երկիրն). բայց բնակիչքն սովալլուկ եւ նօթի, աղքատ, սէֆիլ եւ չպլախ, կարօտ եւ հասրաթ կտոր մի հացի. զի եւ օր մի յազ հաց չուտեն, եւ զայն թեփի եւ թանձր հաց. եւ թէ հանդիպի ուրեք կձու, բորբսած եւ յորդնած պանիր կամ ստոկած կով կամ այլ ինչ՝ (ուտեն) շաքրի պէս: Եւ ասին թէ սոքա Փարաւոնի ազգ են, որք են ձինկանայ. անէծք կայ ի վերայ նոցա. աշխատին եւ ոչ վայելեն, սերմանն եւ ոչ ինքեանց հնձեն. այլ են բեռնակիր, ծառայ եւ ստրուկ ազգաց օտարաց: Եւ զոր ինչ արարին նոքա ընդ որդիսն Իսրայէլի, առնեն եւ նոցա այժմ ազգ Տաճկաց. զի զամենայն զոր ինչ վաստակին նոքա եւ ստանան՝ Տաճիկք յափշտակեն եւ առնուն ի ձեռաց

136 յարգիւնս: — 138 առակաց: — 142 բարելի: — 147 ուրէք: — 150 կա: — 157 փշտակեն: